Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուզբեկստանի Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» Համաձայնագրի ստորագրման նպատակահարմարության մասին

Կարևորելով Հայաստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության միջև առևտրի և տնտեսական կապերի զարգացումը՝ սույն Համաձայնագրի հնարավորություն կընձեռի արդեն Համաձայնագրի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության միջև յուրաքանչյուր տարի փոխանակել համաձայնացված թվաքանակով թույլտվություններ, ինչպես նաև կարգավորել երկու երկրների միջև և տարանցիկ կանոնավոր ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների իրականացումը:

Սույն համաձայնագրի ստորագրումը նաև խթան կհանդիսանա ինտերմոդալ փոխադրումների զարգացման, ինչպես նաև ճանապարհային անվտանգության և վարորդների աշխատանքային պայմանների բարելավման համար:

Համաձայնագրի ստորագրումը կնպաստի բեռների միջազգային փոխադրման և տարանցման դյուրացմանը, դրանց կառավարող ընթացակարգերի պարզեցմանը, մոտարկմանը և ստանդարտացմանը, տրանսպորտային ծախսերի նվազեցմանը, ճանապարհային անվտանգության պայմանների բարելավմանը և այլ երկրներից բեռների տարանցման ներգրավմանը:

Հաշվի առնելով բեռնափոխադրումների բնագավառում այլ պետությունների հետ արդեն իսկ գոյություն ունեցող ազատականացման փորձը, որի արդյունքում դյուրացվել է բեռնափոխադրումների գործընթացը, փոխադրող կազմակերպությունների համար նվազել է փաստաթղթերի ձևակերպման վարչարարությունը, ժամանակը և ծախսերը, ինչպես նաև ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից բեռնափոխադրումների բնագավառում տարվող բարեփոխումների քաղաքականությունը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը նպատակահարմար է գտնում «Հայաստանի

Հանրապետության կառավարության և Ուզբեկստանի Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» Համաձայնագրի ստորագրումը:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար՝ **Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

19.12.2016թ.